ԻՐԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔ

# ՆՈՐ ԱՄՍԱԳԻՐ ԹԵՀՐԱՆՈՒՄ

ԱՊԱԳԱ آپاگا

ماهنامه فرهنگی - اجتماعی

ارمنی زبان

شماره دوم آبان ماه ۱۳۷۷

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Համար 1(2) Նոյեմբեր 1998 թ.

*Անցնող տարուայ Նոյեմբեր ամսից Թեհրանում սկսել է լոյս տեսնել «ԱՊԱԳԱՅ» ամսագիրը, խմբագրութեամբ երիտասարդ մտաւորական եւ Թարգմանիչ՝ Էդուարդ Պաղտասարեանի: Մշակութային եւ հասարակական բնոյթով այս ամսագիրը տպագրուում է գունաւոր, ճաշակաւոր եւ հետաքրքիր բովանդակութեամբ եւ սպասելի է որ այն կը դառնայ մնայուն՝ օգտակար մի հրատարակութիւն, որի կարիքը միշտ զգալի է եղել Իրանահայ համայնքում:*

*«ԱՊԱԳԱՅ»ին աշխատակցում են մի շարք գրողներ եւ մտաւորականներ, այդ թւում Ազատ Մաթեան, Դոկտ. Ռ. Սարդարեան, Խաչիկ Խաչեր, Լեւոն Գ. Մինասեան, Հրաչ Ստեփանեան, Ցովիկ Էդգարեան եւ ուրիշներ:*

*Ամսագիրը հրատարակում է նաեւ պարսկերէն լեզուով յօդուածներ, որոնք առնչւում են հայոց պատմութեանը եւ մշակոյթին:*

*«ԱՊԱԳԱՅ»ի հասցէն հետեւեալն է.*

«APAGA» P.O.Box 15175-117 TEHRAN-IRAN

*Ի դէպ ամսագիրը հրատարակւում է հայրենի ուղղագրութեամբ, որ աւելի մատչելի դառնայ ընթերցողին:*

*Յաջողութիւն եւ յարատեւութիւն մաղթելով Իրանահայ մամուլի այս մէկ նոր անդամին, նրա կորովի խմբագիր՝ Էդուարդ Պաղտասարեանին եւ ողջ անձնակազմին, ցանկանում ենք նորանոր յաջողութիւններ:*